«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի № 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

« » 2022թ. թիվ -Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի № 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 15-ի «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից օգտագործվող զենքի և հատուկ միջոցների ցանկը սահմանելու մասին» № 1160-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1 Որոշման ամբողջ տեքստում և Որոշման հավելվածներում, բացառությամբ Որոշման 3-րդ կետի, «դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող» բառերը փոխարինել «հարկադիր կատարումն ապահովող» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

2. Որոշմամբ հաստատված Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝

համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

Նախագիծ

Հավելված 1

ՀՀ կառավարության 2022 թ.

№ -- որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՆՔ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՁԵՆՔԻ ՏԵՍԱԿԻ, ՁԵՎԻ, ՄՈԴԵԼԻ ԵՎ ԹՎԻ

Պաշտոնը	**Հաս-տիք-ների թիվը**	**Ձենքի տեսակը**	**Ձենքի ձևը**	**Ձեն-քի թիվը**	**Ձենք**
ՀՀ գլխավոր հարկադիր կատարող	1	ծառայողական	կարճ ակոսափող	1	Ոստ քրեա
Գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ	3	ծառայողական	կարճ ակոսափող	3	պահ համ
		քաղաքացիական	գազային	3	ն
Բաժնի պետ	16	ծառայողական	կարճ ակոսափող	16	տեխ բնու
		քաղաքացիական	գազային	16	ունե
Բաժնի պետի տեղակալ	57	ծառայողական	կարճ ակոսափող	30	ցան
Բաժանմունքի պետ		քաղաքացիական	գազային	27	
Գլխավոր խորհրդատու Առաջատար խորհրդատու Ավագ հարկադիր կատարող	186	ծառայողական	կարճ ակոսափող	83	

Հարկադիր կատարող		քաղաքացիական	գազային	84
		քաղաքացիական	էլեկտրա-հարող սարք	32
ԸՆԴԱՄԵՆԸ	**263**	**ծառայողական**	**կարճ ակոսափող**	**133**
		քաղաքացիական	**գազային**	**130**
		քաղաքացիական	**էլեկտրա-հարող սարք**	**32**